Լեռ Կամսար

Փառապանծ Վրիպակներ

Ազգերու լիգա

Երկու խոսք ալ սա հաստատության մասին ըսեմ:

Ի՞նչ է Ազգերու Լիգա:

Քաղաքական այն հարցերը, որ մեծ պետությունները 21 օր վրան նստելեն վերջ չեն թխսեր, այդ հարցերը կդնեն Ազգերու Լիգայի տակ:

Ի՞նչ է Ազգերու Լիգա:-»Կոմպրես», որ կդրվի դիվանագիտական վերքի մը վրա՝ զայն հավիտյանս չլուծելու համար:Անիկա ոչ այլ ինչ է, եթե ոչ պառավական դեղ, որուն կդիմեն բժիշկներեն հույսերնին կտրած հիվանդները:

Լիգան «սուրբ» մըն է, որուն կդիմեն անճարները…չբուժվելու համար:

Ի՞նչ է Ազգերու Լիգա:-

Ծանրություն մը՝ դրված դիվանագիտական թուղթերու վրա… որ քամին չտանի:

Լիգան այն բանքան է, ու երբ մեկը չուզենա իր պարտքը տալ, անոր վրա «փոլից» կքաշե:

Լիգան փայտե հրացան մըն է, որը ոչ մեկի չի վախեցներ:

Վերջապես Լիգան «Աշխատանքի Բորսա» մըն է, ուր կդիմեն խնդրատուներ, աշխատանք… չստանալու համար:

Ահա ինչ է Ազգերի Լիգա:

***

Թուրքիան ոչ թե մի ազգի, այլ համաշխարհային դահիճ է:

1960

Թուրքիան չարիք էր, երբ չկար բոլշևիզմը, բոլշևիկների աշխարհ գալուց հետո նա դարձավ «փոքրագույն չարիք»:

Որովհետև նա թուրքից ավելի անգութ կոտորեց հային, Շահ Աբասից ավելի անդարձ Սիբիր տեղահանեց հայ ընտանիքներ:

Մի գիշերվա մեջ տասներկու հազար հայ ընտանիքներ:

1960

Օրումս ես բարի ազգ կամ պետություն չեմ տեսել: Մի պետություն, որ կահ-կարասի առած ժամանակը մի ավել աթոռ էլ գներ հյուրերի համար: Ասեր՝ էս աթոռն էլ առնեմ, մի հարևան պետություն տունս մտնելիս ոտքի վրա չկանգնի: Ո՛չ: Այդպիսի բան չկա: Հայ ազգը սա վեց հարյուր տարի ոտքի վրա է, ոչ մի մեծ պետություն աթոռ չառաջարկեց, թե ա՛յ տղա, առ նստիր: Այն էլ իր սեփական հողի վրա:

1960

Երկուշաբթի 7.- Կարելի է ասել, որ հայ ազգը ներկայիս գոյություն չունի: Նրա կեսը թուրքերը կոտորեցին 1915 թվին, մնացյալ կեսն էլ դաշնակ ու բոլշևիկ են, որոնք ավելի ոխերիմ են իրար, քան երբևիցե եղել են հայն ու թուրքը:

Ուրեմն, էլ ի՞նչ հայ ազգ:

***

Կոմունիստների աշխարհի գալուց հետո մարդկությունն էլ գոյություն չունի երկրագնդի վրա: Այն բաժանված է երկու մասի, շատ շուտով այդ մասերն իրար կբնաջնջեն, ու վերջ մարդկությանը...

1960

Երկիր մը, ուր ապրելու բոլոր ճամբաները գոցված են՝ գեթ մահը պետք է դյուրին ըլլա:

Պետություն մը, որ գիտե սպանել՝ պիտի գիտնա նաև թաղել իր ժողովուրդը…

1928